


ՏԻՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
Ե. ԹՈՐՈՍՍԵԱՆ

Նամակ կամ որ եւ է
զրու թիւն պէտք է ուղղել առ
Տեօրին. ԱՐՇԱՆՈՅՍ ԳՐԱԳՐԻ
ԳԱՀԻՔԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN
Direc. propr. du journal arménien
ARCHELOUYCE
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Փ Ի Ք

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՆԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե. Գ. Պ. Ս. ՈՍ. ՀԱՄԱՐ	
Նամակն ուղղ պակիս	60
Վեցանկեսայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան	Ֆրանկ 20
Վեցանկեսայ	« 12

ԲԱՆԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԿԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարութեան վրայ է :

Խնայարութեան ուղղում
գրուք խնդրե՛ք ինձ հետ յար

ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են

ՆՈՐ ԵՐԵՒՈՅՐՆԵՐ

Հայ-ժէօն-թիւրք Լեւոն Յէհիկի առ-
թիւ սեղանի վրայ թերթը հետեւաւ
իմաստով բան մը կ'ըսէ : « Կ'երեւայ թէ այդ
անձը ժընէվ պիտի երթայ թերթ մը հրա-
տարակելու և անով ամբողջ թուրքիան ու
զոքելու համար . բայց պէտք է գիտնայ որ
Ձուիցերական կառավարութիւնը՝ ըստ նոր
համաձայնութեան թուրք տէրութեան հետ՝
իր հոգէն պիտի արգաքսէ ամեն խռովա-
բար » :

Եւրոպական մամուլն ալ արդէն ժա-
մանակ մ'առաջ արձագանգած էր այդ հա-
մաձայնութեան լուրը , և միևնոյն ժամա-
նակ Փարիզի թուրք գեսպան Միւսիլի պէյի
Ձուիցերական և Պէլճիական կառավարու-
թեանց քովն ալ իբր թուրք տէրութեան
ներկայացուցիչ կարգուելու և ընդունուելու :

Ազատն Հէլլէտիա , Գուլիէլիոս Թէլի-
նոյն իսկ իր որդւոյն սիրար իր ձեռքով նետ
արձակող այդ անգուսպ հայրենասէրի եր-
կիրը , որուն իւրաքանչիւր քարը հարեւա-
ւոր դիւցազուններու արիւնով շաղուած է .
այն երկիրը ուր՝ իբր անհպելի բազիլիկ՝ կը
փութային ապաստանել երկրիս յեղափոխա-
կանները , ընկերակցականները , անիշխանա-
կանները , նիհիլիսթները , արքայադաւան-
ները , յերջապէս քաղաքականութեան ամեն
հաղածեալները . ճշմարիտ ազատութեան
սիրար այն երկիրը ահա այսօր բռնապետի
մը սոսկ ոստիկանն ըլլալու պաշտօնը կ'ըս-
տանձնէ . ժամանակիս յատկանշական մի ե-
րևոյթն է այդ , զոր կ'արժէ անտես չ'ընել :

Իր խոհմութեամբ իր չէզոքութիւնը
և իր չէզոքութեամբ ալ իր անկախութիւ-
նը հեռաւար իր գոյութիւնը պահպանե-
լէն ետքը , ազատն Հէլլէտիա իր այս վեր-
ջին կարգադրութեամբ ինքզինքը ամենա-
մեծ վտանգի կ'ենթարկէ : Արդարեւ մինչև
հիվայ բոլոր տէրութիւնները կը յարգէին
այդ փոքրիկ հանրապետութեան չէզոքու-
թիւնը , և հոն ապաստանած իրենց հա-
տակները Ձուիցերական սահմանադրութեան
գուրս կ'սպասէին ձերբակալելու համար :
Այդ հիւրընկալ երկիրը թողլու և դուրս
ելլելու իրաւունք անընդարար չէր փա-
խտականներուն համար , որոնցմէ ուրիշ ու-
չինչ կը պահանջուէր բայց միայն երկրի ու-
րիւնաց հպատակիլ :

Բայց թուրք-ձեւլէտական համաձայ-
նութիւնը փոխեց իրերու վիճակը , թուր-
քիոյ տալով մանաւոր գոհացում մը : Եւ
որովհետև չ'կայ տէրութիւն մը որ շատ կամ

քիչ յաջողոտ չ'ըլլայ և մանաւանդ այդ
երկիրը ապաստանած խռովարարներ չ'ու-
նենայ , սուղ ժամանակի մէջ պիտի տեսնենք
որ անոնք ալ պիտի ուղեն մասնակցիլ թուր-
քիոյ շնորհուած առաւելութեան , բան մը
զոր հելլէտական հանրապետութիւնը չ'պի-
տի կրնայ ո՛չ շնորհել և ո՛չ ալ մերժել ,
վտանգի երկու պարագային մէջ ալ — և տէ-
րութեանց մեքենայութիւններու շնորհիւ —
կերպով մը իր անկախութիւնը կորսնցու-
ցած պիտի ըլլայ : Եւ երբ անկախութիւնը
վտանգուի , միջամտութիւնը չ'ուշանար . և
աւելորդ է ըսել թէ ինչ կ'արժէ զօրաւոր
տերութեան մը միջամտութիւնը տկարացու-
նին գործերուն մէջ . Ուրեմն կրնանք ըսել
թէ , ահա տէրութիւն մը որ — թուրք քաղա-
քականութեան շնորհիւ — պիտի շտապէ կամ
զէպ իր անկուսը , կամ դէպ իր սպառազի-
նու մը : Ժամանակիս յատկանշանն ալ արդէն
ուրիշ բան չ'է բայց միայն կամ անհետիւ
քաղաքական աշխարհէն կամ պատրաստ
գտնուել ահեղ բաղխումներու :

Սակայն ինչ որ պարտի մեզ աւելի շա-
հագրագետ այս խնդիրով այն է թէ այդ ե-
ղելութիւնը նոր փաստ մ'է որ ասկաւին
քիչ մը ժամանակ ալ և երկրիս երեսը տեղ
մը չ'պիտի մնայ հաղածեալներուն համար :
Անձնամտութիւնը և շահախնդրութիւնը ան-
խելի կերպով արմատացած են երկրիս վա-
րիչներուն սրտին մէջ . հետեւաբար պէտք է
որ մեծ զգուշութեամբ և աւելի մեծ խու-
համութեամբ շարժինք , դրենք , խօսինք , և
գործենք . մանաւանդ մեր անպիջականնե-
րուն իրաւունքները չ'մոռնանք :

Նոր երևոյթ մ'ալ Պարսկահայոց խըն-
դիրն է : Կործեմ Սալմաստէն հասաւ այն
բօլը թէ մեր յեղափոխականները կը հա-
րազահարեն մեր հայրենակիցները : Ըստ Հըն-
չակեանց պաշտօնական կամ անպաշտօն օր-
կաններուն ինչպէս են « Նոր-Կեանք » « Ի-
րաւունք » « Չայն Հայրենեաց » այդ եղբայ-
րատանջ հերոսները Թուսահայեր են եղեր ,
ուրեմն դաշնակցական են եղեր : Ազատա-
սիրութեան այդ նորատեսակ խաչադրողները ,
զոր յիշեալ թերթերը իրաւամբ ետեւիցի
կը յորջորջեն , ըլլան առսահայեր կամ թըր-
քահայեր , ըլլան Գաշնակցական կամ Հըն-
չակեան , և կամ մի որ և է նորածագ ազա-
տականական , վերջապէս ինչ որ ալ ըլլան ,
ամենէն հեռաւոր քրտականը , միանգամայն ու-
մենէն ցաւալին այն է որ յանուն ազա-
տութեան կը շարժարեն , կը կողոպտեն և
թերեւ ալ կ'սպաննեն իրենց եղբայրները ,

զորոնք հարստահարութենէ , կեղեքումէ ,
կոտորածէ պատապարելու , ազատելու սուրբ
նպատակաւ զինուած են այդ եղբայրներուն
նուիրատուութեամբ գնուած զէնքերով . . .
Ասի ինքզինքն վատ և կեղտաւ կողմն է . իսկ
վտանգաւոր կողմն այն է թէ Պարսկական
կառավարութիւնը որ ճիշտն ըսելու համար՝
նոյն իսկ քաղաքակիրթ և քրիստոնեայ տէ-
րութիւններէն աւելի բարեւէր արամադրու-
թիւններ ցոյց կուտայ գէպի մեր ազգը ,
մերայնոց այս անորակելի ընթացքէն զայ-
րացած և Համիտական թելադրութիւններէն
վերջն ի վերջոյ ուշաբրած թերեւ պիտի
փորձուի կամ իր կրօնակցին շաղիք և կամ
մեր այդ մատանիչուած կրօնակիցներուն
չաւղին հետեւիլ . շաղիքներ՝ որոնց մէջ հայ-
րենասէրները չ'եմ կարծեր որ զգալի տար-
բերութիւն մը տեսնեն . . .

Միթէ տեղը չ'է կրկնելու . « ո՛վ Տէր ,
դու զիս ազատէ իմ բարեկամներէս » . Թըշ-
նամիներուս հոգը ես վրաս կ'առնեմ » :

ՏԱՎՈՒԼ

Լ'Արմենիէն կը քաղենք հետեւեալը .
« Կ . Պօլսէն ստացանք առաջին տաս-
ներկու թիւերը « Տավուլ » ին « Կիսամսեայ
թերթ որ կը հրատարակուի ի Կ Պօլիս ուր-
բաթ օրերը Սէլամըքի արարողութեան մի-
ջոցին » : Զուեշտական , պատկերազարդ է
յիշեալ թերթը և դադանի տպագրութեամբ
ըյս կը տեսնէ . յերիւրուած հասցէն է՝
Համիտիյէ տպարան Կ . Պօլիս :

Յօդուածները՝ իմաստալից և զուար-
թարար՝ անլուր խտտութեամբ գրուած են
Սուլթանին և իր պաշտօնեաներուն դէմ :
Ծաղրանկարները այնքան ճեփօքն են , որ
չ'ենք համարձակիր դանոնք ընթերցողին ե-
րեակայութեան ենթարկել : Միայն մէջ կը
բերենք մեր ազնկարար պաշտօնակցին « հա-
ւանական յեղափոխութիւն » վերնագրով
յօդուածը , որ իր յօդուածներուն է՛ն ան-
վասն է :

« Կացութիւնը սոսկալի է ամբողջ Օսման-
եան կայսրութեան մէջ : Չ'էինք ուղեր չօշտիկ
նիւթ մը որ մեր ծրարէն դուրս է , սակայն ի-
րաց վիճակը այնպիսի երեւոյթ մ'առաւ որ մեր
հայրենասիրութիւնը մեզ կը հարկադրէ զայն
ամփոփել համառօտարար :

« Ահմէտ ձէլուլէտաին փաշա , երբ եւրոպա
գնաց , պաշտօն ունէր՝ փոխադարձ զիջողութիւն-
ներով՝ համաձայնութիւն մը բերելու թրքահը-
պատակ — թուրք եւ Հայ — յեղափոխականներու
և համիտական կառավարութեան մէջ : Բայց

ԱԶԳԱՅԻՆ

—*—

Վերջին պահանջն ուսացանք հետեւեալ նամակը, զոր կը հրատարակենք. կոնդակին հրատարակութիւնը յիտաձգելով մեր յաջորդ թուոյն :

... Խմբագիր և Տնօրէն « Արշալոյս » Լրագրի Աստ

Ինչպէս որ Ձեր Պատ. Թերթին մէջ յայտարարեցիք թէ Պէրպէրեան վարժարանի 25ամեայ յորակաւորութիւն տեղաւորութիւն մէջ յանձնաժողով մը կազմուած է հաւաքելու համար կըրթաւոր ազգայնոց նուէրներն, յանձնաժողովս ալ ներկայիս կը յայտնէ թէ արդէն սկսած է իւր այդ նուիրական աշխատութեան և թէ պէտք ուրոշած է, կանխաւ շրջարեւակաւով մը գիմել բոլոր ազգայնոց և հրաւէր կարգաւ մասնակցելու համար այդ նուիրատուութեան, միայն թէ սրպէսդի տեղացի ազնիւ հասարակութիւնն ալ լաւ համոզուի և գիտնայ թէ այդ նուիրատուութիւնն պիտի ըլլայ այնպիսի անձնաւորութեան մը համար որ կատարելապէս արժանի է ամեն համակրանոց և քաջալերանոց և թէ ազգն արտապահութեան պարտք մը ունի առ այն, կը խնդրէ մասնաւորապէս որ հաճիք, ներկայիս հետ, Ձեր Պատ. Թերթին մէջ հրատարակել Սրբաւանդան Սրբազան Պատրիարքի կոնդակը որ հրատարակուած է Պոլսական Թերթերու մէջ, և որ այնքան յստակ և լաւ կըրպով ի վեր հանած է Ռէթէնս էֆէնտի Պէրպէրեանի բարձր արժանիքը :

Ներխայիս հետ կ'ստանանք նաեւ յիշեալ կոնդակներէն օրինակ մը :

Ընդունեցէ՛ք և ալ յիշ :

Ի Դիմաց Յանձնաժողովոյ

Ատենապետ Ատենապետ

Յ. ՍԵԹԵԱՆ Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Գահերէ 12 Յուլիս 1901

—Ս. Առաջնորդ Հայրը երեկ առաւօտ Աղէքսանդրիտ մեկնեցաւ :

Տիկին Արզար աղա սիրաբը դատուութեամբ լիցած գուրա ելաւ այդ աղքատիկ ընկարանէն, ընկերակցութեամբ ձերուի ձերթաւոյն, որ նկատելով թէ փամանակն ուշ է՝ ուզած էր անոր ուղեկցել մինչև իր տունը :

Անխօս, անմտունջ կ'երթային հանդարտիկ ծովին աւազներուն վրայէն :

Երբ հասան այն նաւակին մօտ, որուն մէջ դարանած էր Ղուկաս էֆէնտի, տիկին Վարդուհի կեցաւ և արտասուտի ձայնով ըստ .

—Պ. ձերթաւօ, ձեր արարքը յաւիտեան անմոռանալի է, և ինչ կերպով ալ վերջաւորի այս գործը, դուք մեր անհուն երախտագիտութեան իրաւունք պիտի ունենաք :

—Տիկին — պատասխանեց Իտալացին — ինչպէս տունն ալ ըսի — և ձեր ամուսինը այդ շատ լաւ գիտէ — դուք ձեր զգացածը և մենք մեր արարքը իմ հարսիս միայն կը պարտինք :

—Ատիկա խօսելու կերպ մ'է, որ ձեր ազնուութիւնը կ'սպացուցանէ. բայց եթէ խնդրէր յայտնուէր չ'եմ գիտեր թէ ինչ պիտի կըրնայինք ընել :

—Դուք, ոչինչ. իսկ ևս, թէ և աննշան, թէ և առանց հայրենակցի և առանց հիւպատոսի, բայց դարձեալ շնորհիւ իմ օտարակազմութեանս կը յուսամ թէ դիւրաւ չ'եմ յաղթուելու ինչ որ ալ ըլլայ, կ'ընանք ապահով ըլլալ որ, եթէ հարկը պահանջէ, իմ մարմնս զբայէն պէտք պիտի ըլլայ անցնել ձեր ամուսնոյն հասնելու համար :

Ձեր այդ մարդասիրական վեր զգացումներուն համարժէք պատասխան գտնել անկարելի է — ըստ Վարդուհի աչքերը սրբելով — իմ խնդրքս մերժեցիք, և չ'ուզեցիք ընդունիլ դրամական օգնութիւն մը, որուն այնքան պէտք ունիք :

ԹԱՅՃԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ

ԵՒ

ՄԱՆԿԱՊԱՐՏԻՋ

—*—

Ի Շարս Մոնեսիլէս Աշի

Թեոփիլիյէ դեղարանին դիմացի փողոցին մէջ

թիւ 7

Սոյն հաստատութեան մէջ կ'աւանդուին Մայրենի լեզու, ճրարներն, կրօնագրութիւն և ամեն գիտութեանց սկզբունք. Օրիորդաց համար ամեն տեսակ ձեռագործք :

Մտղք զո՛ն պիտի մնան իրենց զաւակաց սրտած մասնաւոր խնամքներէն. փախաքողք կրնան գիմել ի վարժարան ամեն օր 8-11, բացի կերակուէն :

1-4

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիացի գիտուն մը ճարտար միջոց մը գտեր է գիրքերը և թերթերը եւ լեքտրականութեամբ տպագրելու, առանց մեկանի :

Տեսնենք տակաւին ինչպիսի չ'պիտի ընէ ալեքտրականութիւնը :

—Անցեալ Մարտ ամսոյ մէջ Փարիզի մէջ հրատարակուելու սկսած Մօնիթօր Օթօման « պաշտօնական Օրկան Օտօմանեան մարդասիրական ընկերութեան և երիտասարդ-թուրքերու » կ'ըսէ թէ « Մարգարէին ազգական Շէրիֆ Էսսէիտ-Համիտ-Էտտին էֆէնտի, որ վերջերս Խալիֆա յորջորջեց ինքզինքը, ունի 31, 250 անվեհեր զինուորներ որոնք Մաւզէր հրացաններով զինուած են » :

ՏԱՃԿԱՍՏԱՆԸ ՏԱՃԻԿՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ. — Հայկական կոտորածը արդէն կրնար սուլթանին վերագրել այդպիսի սկզբունք մը, զոր ի բաց առեալ կոտորածը կը հաստատէ սա իրողութիւնը թէ սուլթանին մաս-

—Տիկին դարձեալ կ'ըսեմ. աւելի լաւ կ'ընէիք ձեր այդ օգնութիւնը նուիրելով չքաւորներուն, որբերուն, այրներուն, որոնք հիմայ հարիւր հազարներով կը համբուին ձեր իսկ հայրենակցաց, ազգականաց մէջ, ի բաց առեալ օտար չուառականները : Ես ևս տղաս կ'աշխատինք, հետեւաբար կարօտ չ'ենք, փառք Աստուծոյ (այս վերջին բառերը Մարիէթիայի կը պարտիմ) : Ասկէ զատ ետ ալ իմ նպատակս ունիմ : Եւ որպէսդի ուրիշ անգամ հարկ չ'մնայ այս տեսակ առաջարկութեան մը. հոս աստղերու տակ և ծովին առջեւ վերջնականապէս կը յայտարարեմ որ եթէ անյազդութիւնն ունենամ Արզար աղայի հանձնելի չ'ըլլալու իմ այս մերժումովս, ինք ազատ է տունս թողուլ և ուզած տեղը երթալ, վառնալիս ես այս կէտան վրայ անդրդուելի պիտի մնամ : Ատոր վրայ, կարծեմ թէ վերէն վարէն խոնարութեան մէջ մնալ կըրնայ շատ առողջարար չ'ըլլալ, հետեւաբար երթանք, եթէ կ'ուզէք :

Մանկամարդ կ'ինը և ձերունին հաղիւ աներեւութացան մթութեան մէջ, և ահա հեղեղալի քրքիչով մը մակոյկէն դուրս ցատկեց Ղուկաս էֆէնտի :

—Այս առտու — կը խորհէր փաստաբանը — քիչ մնաց քրոջս հետ պիտի տուուէի գիտնալու համար դադարելը մը, որ արհա գիպուածը յանձնեց ինձ իր ամեն պարագաներով, Հատ մ'ալ այսքան անվիճելի հրաշք մը, և կը խօստանամ վերջապէս որոշել թէ ո՞ր կրօնքի կամ դաւանանքի պիտի հետեւիմ : Եւ դուն միշտ անփոփոխ պիտի մնաս հէ՞ . խեղճ ձերթաւօ : Ես կ'ըստանանեմ քու անդրդուելութիւնդ յեղաշրջելու հողը. բայց ոչ բանաբարիով. Աստուած չ'ընէ որ օտարակազմութիւն մը — որքան անպաշտպան ալ ըլլայ — անհանգիստ ընելով իմ այսքան յստակ

մինչդեռ ձեռալէտաին մարտդական զիզերով փամանակ կ'անցնէր Գոնթրըքսէլլիյի մէջ, երբ արգի կեղտոտ Գանարիլլան, զաւարտութեան, թունաւորման և Մուրատ Ե. ի գահակալութեան նման իր սովորական առասպէլներով այն աստիճան խելայեղեց Ապաիւ Համիտը, որ վերջապէս սուլթան ևս կանչեց ձեռալէտաինը և անոր հրամայեց իր տունը նստիլ և նոն տեղաւորուել ուզածին չափ : Այսօրուան կառավարողը գիմարութեան կուսակցութիւնն է այսինքն կուսակցութիւնը այն բոլոր արիզաւարք և ժապաւէնակիր խոզերուն, զորոնք վեհապետը կը գիրցնէ, և որոնք Համիտը կը գրգեն խենթութեանց վրայ խենթութիւններ բարդելու : Սմեն օր հարիւրաւոր ձերբակալութիւններ անդի կ'ուսնենան. բանտարկեալները խաբազանի տակ արիւն թափելէն ետքը, իրենց վէրքերէն կը մոռնին եթէ սովամահ չ'ըլլան. պատուաւոր պաշտօնեաներ, պատկառելի իւլէմաներ, կարիճ ուսանողներ, վերջապէս բնակչաց սիրտ ունեցողները կ'աքսորուին կը թշնամանուին, ամենէն խայտառակ կոփանքի կ'ենթարկուին : Կրնորն անվամ գերծ չ'են Պալատի փաստօրներուն խրժգժութիւններէն :

Ինքնախաբուութիւնն ալ անկարելի է. չափն անցաւ. փողովուրդը կատաղած է ևս ալ նեղութիւնը յանձն չ'առնել ծածկելու իր ասելութիւնը ընդդէմ այն չարաչոք պետին, որ գինք կը տառապեցնէ այնքան երկտր փամանակ ի վեր կ'ընտանուրները անիծելով միայն կը յիշեն անոր անունը : Սպանները, զօրավարները, ամբողջ բանակը բոտ մը, նշան մը միայն կ'ըսպանեն փողովորդին միանալու և երբեք ֆէօզկի վրայ քաղու համար : Յեղափոխութիւն մը մօտալուտ է : Հանրութեան անձնուիրութիւնը, յարգանքը, համակրութիւնը կ'երթան Մուրատին, թուրքիոյ օրինաւոր Սուլթանին : Բայց, աւա՛ղ, ինչ վիճակի մէջ պիտի գտնուի երբ հանուի այն բանտէն, ուր իր եղբայրը զայն կը պահէ քսանեւէինգ տարիներէ ի վեր :

Դարձեալ կ'ըսենք, գործելու համար կ'ըսպասուի հրամանի մը, որուն նշանադրը պիտի ըլլայ « կեցցէ՛ Հայրենիք » : Ո՞վ պիտի տայ այդ հրամանը : Որո՞նք բերնէն պիտի թռչի այդ արգաստէտ աղաղակը ... :

« Շատ չ'անցած պիտի գիտնանք : »

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ANCH' IO SON UOMO (ԵՍ ԱԼ ՄԱՐԴ ԵՄ) (11)

2.

—Ես ստիպուած էի վճարել թէ՛ եղբորդ՝ դատաւարելու համար, և թէ՛ դատաւորին՝ նըպատաւոր վճիռներ ստանալու համար : Այս կերպով, սնանկութեամբ ձեռք բերած թառապատիկը ջուրի պէս հոսեցաւ գնաց :

—Պատիւդ ալ հետը քեց տարաւ :

—Վարդուհի՛ ... :

—Լինցուր :

—Դիտե՛ս ինչ լսեցի նոյն իսկ այդ օտնախմբութեան օրը :

—Ինչ :

—Ստոյգ աղբիւրէ մը տեղեկացայ որ կըրայրդ Ղուկաս էֆէնտի ինքն անձամբ կը խրատէ եղբր այն մարդիկը՝ դատարան դիմելու, որպէսզի ևս ստիպուելի իրեն վարձք վճարելու իմ պաշտպանութեանս համար : Եւ ո՛չ միայն այս, այլ դատաւորին անունով՝ իբր կաշառ ինձմէ քաջածն ալ դարձեալ եղբայրարար կը կիսուի եղբր դատաւորին հետ : Հասկցա՞ր հիմայ թէ ինչու կը ստիպամ քու այդ եղբորմէդ :

—Այո՛, հասկցայ. համոզուեցայ նաեւ. որ աշխարհիս ամենազժբաղդ արտարձն եմ :

—Ինչպէս :

—Դուն եղբորմէս միայն կը ստիպաս. իսկ ինձի՛ պժգանք կուտան թէ՛ եղբայրս և թէ՛ այրս ... :

նաւոր հրաւերով կամ արտօնած դիրու-
թեանց շնորհիւ 1899էն ի վեր Տաճկաստան
զաղթած են Պուլկարիայէն շուրջ 1000, 000
թուրքեր, ուստիայէն 30, 000 չէրքէզի ըն-
տանիք — ի բաց առեալ ուրիշ 40, 000 ըն-
տանիքներ, որոնք մօտերս պիտի գաղթեն-
կրէտէն 60, 000 թուրք արդէն թուրքիոյ
մէջ ազգաւորուած են և ուրիշ 60, 000 ալ
կ'ապտուեն : Վերջերս Գօնիային Վալին
շուտով երկու հազար բնակարան շինել տա-
լու հրաման ստացաւ, Պօնիայէն մեկնելու
վրայ եղող երկու հազար թուրք ընտանիք-
ներու համար :

— Ճիպոթիէն կը հեռագրուի թէ բաւ
թէգլամէթ, որ Մենելիքի ամենէն հաւա-
տարիմ զօրավարներէն մին էր, ապստամ-
բած և բլուրի մը վրայ ամրացած է : Մե-
նելիք կը պատրաստուի անոր վրայ յարձա-
կելու :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Կ'ըսուի թէ Ն. Բ. Խիսովը Կ. Պօլսէն
մեկնելէն ետքը պտոյտ մը պիտի ընէ դէ-
պի Յաննական արշիպեղագոսի կղզիները :

— Քէնէյի առողջապահական քննիչը ա-
մեն մէկ կարիճի համար երկու միլիէմ'
պարգև խօստացած ըլլալով, անցեալ տարի
60, 000 կարիճ բռնուած և իրեն յանձնը-
ուած էին : Այս տարի հունձքը նուազած կ'ե-
րևի, եթէ նկատի աւնենք թէ Յունվարէ
մինչև Յունիս միայն 501 հատ կարելի ե-
ղած է ձեռք անցնել այդ համակրելի զե-
ռուներէն :

— Կը լսենք թէ Ապպասիյէի եւրոպա-
կան հիւանդանոցը վերածուած է անկեղա-
նոցի, ուր անխտիր պիտի ընդունուին ամեն
ազգէ անկար և անոք ծերեր :

Չուրս պղտորեմ, Ո՛չ, ոսկին է լուծիչ ամեն զբ-
ուարութեանց, եւ այդ ալ իմ գրպանէս չ'պիտի
եղլէ : Հանրածանօթ է իմ սիրելի քեռայրիս կըծ-
ծիւթիւնը . տասը քսան ոսկույ գումար մը կըը-
նայ յիմար իտալացույ մը դերագրածութիւնը
վիրաւորել . բայց երբ իր աչքերուն առջև փա-
փուլուն գունդեր տեսնէ այդ անարգ կոչուած մե-
տաղէն, այն ատեն ձիւրօլմօ կը դառնայ կ'ըլ-
լայ մին ինծի ծանօթ գործ գիտցողներէն : Բայց
ո՞ր սատանայ իմ անման քեռայրս բերաւ եւ
այդ իտալացույն ճիրաններուն մէջ խօթեց : Ար-
դար աղա ձիւրօլմօյին տունն ապաստանած . . .
ինչպէ՛ ճաթեւ կուզայ կոր . . . : Մարդը « ես
ալ իմ նպատակս ունիմ » կ'ըսէ . ի՞նչ կրնայ ըլ-
լալ ասանկ խեղճ ու կրակ մարդու մը նպատա-
կը, եթէ ոչ գաղանիք մը, նոյն իսկ մարդ մը —
մասնաւանդ այնպիսի մարդ մը որ զինք ապա-
կած է — ծախել աւելի վճարողին, եթէ ոչ ուրիշ
բանի, զոնէ վրէժ լուծելու համար . . . : Եւ, աչ,
պէտք է՛ որ իմ սիրելի քեռայրս աւելի երկայն
ժամանակ մնայ այդ տան մէջ . . . : Բայց արդ-
եօք վարդուհի անոնց պատմից իմ այսօրուան
այցելութիւնս . . . : Ինչեւիցէ, ժամանակ չ'կոր-
անցնենք եւ երթանք մեր միւս արմարը գտնենք :

Հաստատուած ճամբարութիւն մ'է որ հայ-
կական կոտորածին միջոցին հրամանակատար
գահիճ-խուժանին կատարութիւնը միշտ զու-
գրնդաց գտնուած է անխիղկօտ անխիղճ —
հրամանատարներուն խոխոզելու առաւել կամ
նուազ տրամադրութեան հետ : Հայկական հա-
լածանքը անհուն հայելի մը եղաւ ստուարաթիւ
անձանց — պաշտօնակալ թէ սոսկ անհատ, հայ
թէ այլ ազգ — բուն նկարագրերը ցոլացնող : Բայց
չ'կարծուի թէ ամեն զործող բնաւ ինչ որ ներք-
նապէս կը գրգռուի ընել : Ինչպէս աշխարհիկ ա-
մեն գործերու մէջ, այդ քառօնիկ ոգրերգու-

— Անկեղծ օրէն կը շնորհաւորենք ՊՊ .
Միքայէլ Պաղատարեան, Ար Մենակ Մէօթէ-
մէտեան և Կարապետ Թարազեան Հայ պա-
տանիները, որոնք Թրէքներու Գօլէփին տա-
րեկան հարցաքննութեան մէջ պատուոյ մըր-
ցանակներն ստացան, անշուշտ շնորհիւ ի-
րենց անդուլ աշխատութեանց : Կը յուսանք
թէ տարի մը ետքը ուրիշ հայրենակիցնե-
րու անուններն ալ արձանագրելու ուրախու-
թիւնը կ'ունենանք :

— Ըստ երևոյթի մրանտական յեղափո-
խութեան տարեգարձը աւելի քան երբէք
մեծ հանգէտով պիտի տօնուի վաղը Էզպէ-
քիյէի պարտիզին մէջ : Մուսթի տամր կը
ծախուի 10 զըշ . ուղջ :

— Ն. Բ. Սլաթէն բաշա Սուտանէն բե-
րու երկու առիւծակոչիւն, զորոնք Աւստը-
րիոյ կայսեր պիտի նուիրէ :

— Վերջին 24 ժամուան մէջ Զակապիկ
քաղաքը ժանտախտէ մեռեալ մ'ունեցաւ
հիւանդանոցէն դուրս, և երկու բուժում :
Հիմայ 14 վարակեալ կը դարմանուին յիշ-
եալ քաղաքին հիւանդանոցին մէջ . մէկ Մի-
նիէյի մէջ . երկու ազգ. քսանդրիոյ մէջ և եր-
կու Բօր-Սայիտի մէջ . ընդամենը 19 վարակ-
եալ :

ժանտախտին ծաղուձէն մինչև այսօր 88
դէպք, 38 մահ և 31 բուժում արձանագրը-
ուած է ամբողջ եգիպտոսի մէջ :

ՀԵ Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 11 Յուլիս . — Վիէնայէն թայ-
մըզի կը հաղորդուի որ Սերպիոյ և Պուլկա-
րիոյ համար ուստիոյ յարաճուն բարեկա-
մութիւնը մտատանջութիւն կը պատճառէ
Աւստրիական կառավարութեան :

Թեան մէջ ալ՝ ըստ պարագայի եւ ըստ անհա-
տական հաշուի՝ գիմակաւորներու եւ հաճոյա-
կատարներու թիւը թերեւս գերազանցեց համո-
զուում եւ անձնիշխանօրէն գործողներուն թիւը .
ինչպէս ըսինք, Ս . քաղաքը է՛ր գաղթած
վայելելի համոտակալան անդորրութիւն մը .
զոր կը պարտէր մասամբ իր ծովեզրեայ դիր-
քին, եւ մասամբ Գալմագամին անձնական հա-
շիւներուն :

Մագուժով Զէրքէզ այս պաշտօնակալը իս-
կապէս մոլեռանդ չարասէր, վատողի անձ մ'էր,
ինչպէս որ նախախղափոխական ժամանակներու
մէջ իր գործերով ցոյց տուած էր այդ յատկու-
թիւնները այլեւ այլ տեղեր, մասնաւորապէս
Ս . ի մէջ, որ՝ մեր պատմութեան ժամանակը՝
հինգերորդ կամ վեցերորդ անգամ ըլլալով անոր
պաշտօնատեղին եղած էր : Զէրքէզ Պէհէթի պէյ
կը սիրէր յիշեալ քաղաքը . վասնզի կառուած-
ներ ունենալով հոն՝ կ'ուզէր զանոնք չահագոր-
ծել իր անձնական հակողութեան ստակ : Այս
պատճառաւ — որպէսզի իրեն զէմ բողոքելու ան-
դի չ'մնայ — աչք կը գոցէր իր ստորակարգեալ-
ներուն արարքներուն վրայ, եւ անլուր ճիզեր
կ'ընէր մտերմական յարաբերութիւններ ունե-
նալու համար հիւպատոսական մարմիններու
հետ : Տիրեղերին թերեւս ամենամեծ կաշառակե-
րն էր, եւ պաշտօնակալն ձեւակերպութեանց
անտրուանջ գերի : Ժողովրդային մանր մուշր
գործերու եւ նոյն իսկ իրեն զէմ եղած նախա-
տական խօսքերու կարեւորութիւն չ'էր տար :

— Անանկ բաներ ինծի վրդ կուզան, կ'ըսէր
ճանճի եզգիւնին ակնաբիւրով :

Այս վրդ բառը այնքան յաճախ գործածած
էր որ ժողովուրդը այդ յատկանշական մակդի-
րով կը յորջորջէր զինքը :

— Այսօր վրդը կատարած կ'երևայ :
— Վրդ պտոյտի երկր է եւն :

Ամսոյս մէջ 1500 հեռակալոր պիտի
մեկնին Գարի համար :

Բրէթօրիա 11 Յուլիս . — Էնտէլտպիւր-
կէն Լարտ Մէթիւէն կ'իմացնէ որ Պօէրու-
կան կայսրի մը վրայ յանկարծ յարձակե-
լով 43 զերի, մեծաքանակ սաղմամթերք
և արջառ ձեռք անցուց :

Բէթէրսպուրկ 11 Յուլիս . — Հրգեհ մը
երեսուն տուն փճացուց Հարով թաղին մէջ :

ՀԵՂԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 12 ՅՈՒՄ 1901					
3267	3734	2802	5121	4192	459
1443	1535	1932	2673	4017	4282
5052	5204	5403	5438	5583	6760
6931	7679	8091	8694	8847	8941
9027 9044 9121					

ՀԱՅՎԱԿԱՆ ՄՐՃԱՐԱՆ

« ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ »

Էզպէթիյէ, Սրբնախա պատի դէմ, Տիար
Գառնիկ Սիրունեանի սեփականութիւնը եղող
սոյն հաստատութիւն՝ որ Գահրիէի ամենէն զե-
ղատեսիլ եւ ամենէն օգտուուն դերքը կը գրաւէ,
ոչ միայն միջազգային այլ նոյն իսկ հայկական
ժամագրավայր մը հանդիսացած է :

Սպասարկութեան մասին ցոյց տրուած փոյ-
թնք, ըմպելիաց մաքրութեան համար տարուած
խնամքն ու զիններու չափաւորութիւնը ուրիշ
ո՛չ մէկ տեղ կարելի է տեսնել : Հոն՝ ամեն ճա-
շակ իր գոհացումը կրնայ գտնել :

Օտար լեզուաւ լրագրաց հետ կը գտնուին
հայերէն ամեն թերթեր :

ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ հասցեով կ'ստանա
ներն եւ աւանդներն անմիջապէս կը յանձնուին
իրենց սէրերուն :

Վերջապէս միայն մէկ անգամ այցելողը
կ'ընարէ սոյն Սրճարանը ընել իր ամենօրեայ
յաճախավայրը :

ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ
Էզպէթիյէ, Սրբնախա պատի դէմ

Վրդ Պէհէթի Պէյ ամենամեծ մտահոգու-
թեանց մէջ կ'իյնար երբ Վալին փոխուէր Նեո-
րեկը, որ զոնողութիւններ ըրած էր պաշտօնա-
սեղի մը ձեռք անցնելու համար, հալիւ հոսած
կ'սկսէր միջոցներ փնտռել կամ ստեղծել ո՛չ մի-
այն իր կորուստը փոխարինելու, այլ նաեւ ա-
պագայի հաւանականութեան դէմ պահեստի գու-
մար մ'ունենալու համար : Ուստի ալ ու ճախ կը
յարձակէր, կը բանտարկէր, պաշտօններ կ'ունէր
հստար . եւ որովհետեւ շնորհիւ այլապէս թաղե-
ւիտ միջոցներու անգն տեղեկացած կ'ըլլար Պէհ-
էթի պէյի կացութեան եւ շահերուն վրայ զո-
րոնք ու ունէր Ս . ի մէջ, գաղանի զեկուցով մը
կը խնդրուէր դրամական որոշ գումար մը, որուն
վճարուելովը միայն վրդին կտրելի պիտի ըլլար
պահել իր քաղաքը : Գալմագամը հարկադրեալ
կը վճարէր, եւ անկէ ետք քսնի մը ամիսներ
մտերիմը կ'ըլլար դատաւորին, զոր միշտ կ'ա-
տէր : Չար լեզուները կը պնդեն թէ դատաւորը
կը փոխարինէր Գալմագամին կորուստը, եւ ինք
բազմապատկօրէն կը փոխարինուէր գաղափար-
ընդներէն, փաստաբաններէն, որոնց յայտնի եւ
անսպառ ոսկեհանքն է ժողովուրդին ճակարկ
քրտինքը . . . :

Պէհէթի պէյ ժամանակին Եւրոպա գացած
ըլլալով գաղափար մը կազմած էր արեւմտեան
ոտովորութեանց վրայ, եւ դիտէր Ֆրանսերէն քա-
նի մը բառ քով քովի բերել Նեոլեոն էֆէնտի
հետ ալ հայաբնակ գաւառները պտտած ըլլալով
— երբ յիշեալ էֆէնտին՝ իբր կայսերական դօմի-
սէր՝ պտոյտներ կը կատարէր ասիական մի քա-
նի նահանգներու մէջ — նոյներէն ալ կը խեցբե-
կէր :

(Շարունակելի) Ա . ՊԱԼԵԱՆ

ԳՐԱՇԱՐԻ ՊԵՏՔԻ ԿԱՅ

Ուր եւ մեր գործ փնտռող եւ չկայ ըսողները :

Երկու վարժ գրաչարի պէտքը կայ . մէկը « Արշալոյս » ի , եւ միւսը Հրատարակչական Ընկերութեան » համար . տմասկան 80-120 Քր . գիմեւ « Արշալոյս » ի Խմբագրատունը :

Ուսանող գրաչարներ ալ կ'ընդունուին :

ԱԶԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանէն լոյս տեսած է ԱԶԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ գերբը՝ որը տարիներէ ի վեր սպառած էր :

Այս ութ ու կէս երկսիւնակ մեծադիր Փորձայով գերբը Գահիրէի Հայոց Հրատարակչական Ընկերութեան երախտիրքն է : Գինն է երեք ճրսեթ :

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐԻ

ՊՈՏԿԵՐԱԶՈՐԻ

Ս Բ Ա Ն Ս Ս Ա Ջ Ա Յ

ՓԱՐԻՉ 1901

Սոյն ընդարձակ Բառարկը, որուն Ա. ռալին Հատարը 1061 մեծադիր երեսներէ բաղկացած է բազմաթիւ պատկերներով զարդարուած հրատարակ ելած է և կը պարունակէ A-H գերբը, կը վաճառուի ի Գահիրէ . գիմեւ ի Պէյն-էլ-Սուրէն Հայոց Եկեղեցին :

ՈՐ . ԳՐԻՍՏԻՆԷ ԳԱԶԱԶԵԱՆԻ

ՍՐԱՌ ԼԱՅՓ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագին . — Ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վճարմանց յապաղումի պահուն . — Չափող պարագաներու մէջ անսխալական հաշուեյարդարութիւն . — Շահու բաժանումով ամեն Հինի ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս . ԱԻԾՆԱԲ

Ընդհանուր ներկայացուցիչ եգիպտոսի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

« Արշալոյս » ի Տպարանէն ճաշակաւոր տպագրութեամբ լոյս տեսաւ , նորին Ս . Օժուրիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրիկի երկասիրութիւնն « Վերջալոյսի Չայներ » . որոյ մասին արդէն խօսած էինք ասկէ առաջ :

ՏՕՔԹ . Ա . Յ . ՔԻՐԵՍՈՒՅԵԱՆ

Իր գլխիքը Շարա գլօս-Պէյն փոխադրած լինելով ի Տահէր , Շարա Պիրքէթ-էլ-Բաթը , Ֆրէրներու վարժարանին գիմաց , կը ծանուցանէ իր արգոյ յաճախորդաց որ յետ այսու իր ինամանց պէտք ունեցողները հաճին գիմեւ վերադիտալ տեղն ուր կը գտնուի կէս օրէ առաջ ժամը 9-11 և կէս օրէ յետոյ 3-5 :

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե . ԹՈՐՈՍԵԱՆԻ

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՑՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԵՆԿԻՐ

Պատարի փոսոյ . Խաչնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Սթէյն ճիշդ գիմաց , Գաթէ Տը Լա Պարզի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՆՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6530 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն բաւազոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են ևւ ստանցմէ մինչև ցաւք 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիպայարակներով ևւ մեքայներով վարձատրուած , երաշխաւորեալ մեքենաներ ,


ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական առևտրականցիւիին մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ , աշխարհութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յաջխանչիւն :



Չրի դասեր և նորագուծութիւններ , ՍԻՆԿԵՐ մեքենայ յից համար , յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Գիւրու թիւն Փոխանակութիւններն մեքենայից եւ նորագութիւն ամեն կազգի Մեքենայից

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրևէ ընկերութիւնէ մէկ միլեար աւելի է :

ԳԷՈՐԳ ԵԿԱԻՕԾ ներկու յաջուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշօր և է ընկերութեանէ աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործախատար յՊրէքսանգրիա :

ԿՕՇԿԱԿԱՐ

Գ . ԵՒ Յ . ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԲԱՐԻ

Պագար-Մուրուր թիւ 39

Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած , ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող , սուքերը կոշտերու ցոււերէն աղատ պահող և գիմացկուն կօշիկներ :

Դիմեցէ՛ք ի Պագար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիրեան եղբարոց , որոնց գործածած ապրանքներու տուկունութիւնն և ձեւերու մաշիւն ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյսէ վեր է :

Պէշիրեան եղբարք իրենց յաճախորդաց քրած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ գիմեւ իրենց . ապահովագին մնայուն յաճախորդ պիտի լինիք :

ԲԱՐՈՒՑԻ ԸՆՏԻՐ ԱՇՈՒՆ

Ունէին՞ք մինչև ցարդ հայ մը որ գիտնար մասձել թէ՛ անուխն ալ մեծաքանակ ապառուկ' ունենայ և կրնայ կարեւոր շահ արտադրել : Ասեւտուրի այդ ապարդէզն ալ օտարներուն թողուած էր :

Տիւր Յակոբ Վարդանեան (Սանտահանի քեռորդի) այժմ՝ ամենաբնախոր անուխի վաճառականութեամբ կ'ըրազի և մրցում բացած է օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք իր մթերանոցը Սուգ-Սուտար թիւ 17 և 18 :

Անխարդախ կշիւ և չափաւոր գին :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ՁԷՅՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՁԵԼԷԿԵԱՆԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Գին 10 Գահեկան ողլ :